ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգարժան համագյուղացիներ և հյուրեր այսօր Ձեր քննարկմանն եմ ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղապետարանի և ավագանու կողմից 2012 թվականի ընթացքում կատարված աշխատանքների մասին:

Ես կներկայացնեմ յուրաքանչյուր բնագավառ առանձին-առանձին և վերջում կդրվի քննարկման և կլսենք Ձեզանից յուրաքանչյուրի կարծիքն ու առաջարկությունը:

1. **Ֆինանսների բնագավառ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական համայնքի բյուջեով 2012 թվականի հաստատվել են.

Եկամուտներ ընդամենը՝ 88860.8հազար դրամ

1) վարչական բյուջե՝ 88860.8 հազար դրամ

1) Վարչական բյուջեով հաստատվել են եկամուտներ՝

հ/հ/	եկամուտներ	2012թ. հաստատված	2-րդ կիսամյակի կատարողականը	Կատարողականը Առ 01.01.2013թ. %
1	Հողի հարկ	16510.6	18330.9	111
2	Գույքահարկ	7335.9	6537.7	89.2
3	Վարձակալական հողի վարձ	2500.0	1795.9	71.8
4	Տեղական տուրքեր	450.0	488.8	108.6
5	Այլ եկամուտներ	300.0	52.5	17.5
6	Ընդամենը սեփական եկամուտներ	27096.5	27205.8	100.4
7	Մնացորդ առ 01.01.2011թ.	5723.6	5723.6	100
8	դոտացիա	61164.3	61164.3	100
	Ընդամենը	93984.4	94093.7	100.1

Ընդամենը եկամուտներ՝ 94093.7 հազար դրամ

2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ կատարվել են հետևյալ ծախսերը ըստ բնագավառների

1. Տեղական ինքնակառավարման ապարատի պահպանման համար

   Ընդամենը՝ 38249.1հազ.դրամ

2. Տնտեսական հարաբերություններ

   Ընդամենը՝ 2887.5 հազ.դրամ

3. Շրջակա միջավայրի պաշտպանություն

   Ընդամենը՝ 1967.9 հազ.դրամ

4. Հանգիստ մշակույթ և կրոն

   Ընդամենը՝ 20602.9 հազ.դրամ

5. Կրթություն և գիտություն

   Ընդամենը՝ 14075.8 հազ.դրամ

6. Սոցիալական պաշտպանություն

   Ընդամենը՝ 7690.2 հազ.դրամ

7. Վարկի մարում

   Ընդամենը՝ 2400.0 հազ.դրամ

2. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառ

1) Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է՝ քաղաքացիների ընդունելության օր, որի ժամանակ լուծվում են բնակիչների բազմաթիվ խնդիրներ: Քաղաքացիներից 2012 թվականի ստացվել է 4 դիմում-բողոք, որից 4-ն էլ բավարարվել է:
2) Պաշտպանվում են համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը:
3) Համայնքում կատարվել է բնակիչների սեռա-տարիքային ամենամյա հաշվառում:
4) Ապահովվել է ընտրական տեղամասային կենտրոնում քվեարկության համար անհրաժեշտ կահավորումը:

3. Հասարակական կարգի պահպանության բնագավառ

5) Համայնքում պահպանվել է կարգ ու կանոն, մեծ խախտումներ համայնքի բնակիչների կողմից չեն իրականացվել:
6) Համայնքում կատարված իրավախախտումների մասին ոստիկանության ներկայացուցչի տրված տեղեկատվության համաձայն որոշակի անձինք ենթարկվել են վարչական պատասխանատվության:

4. Պաշտպանության բնագավառում

7) Աջակցել ենք զարնանային և աշնանային զորակոչերին, ուսումնավարժական հավաքներին:
8) Աջակցել ենք հաշմանդամ զինվորականների, պատերազմի մասնակիցների այրիների, Արցախի պատերազմի մասնակիցների հանգստի և սոցիալական խնդիրներին:
9) Աջակցել ենք ՔՊ մարմինների գործունեությանը:

5. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

10)Կառուցապատողներին տրվել են ճարտարապետահատակագծային առաջադրանքներ, համաձայնեցվել են ճարտարապետաշինարարական նախագծեր, շինարարության թույլտվություններ:
11) Համայնքում կատարվում է աղբաթափություն:
12) Կազմակերպվում է կանաչ գոտիներ խնամքն ու պահպանությունը:
13) Աջակցել ենք բնակիչներին նոր կառուցվող բնակելի տների նախագծերի մշակման և կատալոգների տրամադրմամբ:

6. Հողօգտագործման բնագավառ

14) Չափագրվել և ուղղումներ են կատարվել համայնքի որոշակի հողատարածքներում:

7. Տրանսպորտի բնագավառ

15) Կատարվել է համայնքի ճանապարհների հարթեցում և խճապատում:

8. Առևտրի և ծառայությունների բնագավառ

16) Հսկողություն է իրականացվում համայնքի առևտրի, հանրային սննդի ծառայությունների ոլորտում, անցկացվում են ստուգումներ:

9. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ

17) Աշխատում են համայնքի մշակույթի տունը, գրադարանը, մանկապարտեզը՝ երեք խմբով:

18) Միջոցներ են ձեռնարկվում նոր աշխատատեղերի ստեղծման համար:

19) Համայնքում կազմակերպվել են միջոցառումներ՝

- Կազմակերպվել է միջոցառում նվիրված մայրության և գեղեցկության տոնի միամյակին: Համայնքի թոշակառու կանանց բաժանվել են նվերներ:
- Նվիրված Մեծ Եղեռնի 97-ամյակին
- Նվիրված Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 67-ամյակին և Շուշիի ազատագրման 20-ամյակին , մեծարվել են մասնակիցները և տրվել են դրամական օգնություն:
- Նվիրված երեխաների պաշտպանության օրվան՝ հունիսի 1-ին
- Կազմակերպվել է միջոցառում համայնքի թոշակառու պապիների և տատիների համար Էքսկուրսիա Հանրապետության տեսարժան վայրեր:
- Մանկապարտեզի ավարտական խմբի երեխաներին հանձնվել է նվերներ:
- Կազմակերպվել է <<Մաճառի տոն >> միջոցառում:
- Գյուղապետարանի, մշակույթի տան, <<Մրգաշատի բուժ. ամբուլատորիա>>, <<Մրգաշատի մանկապարտեզ>> ՀՈԱԿ -ի, <<Մրգաշատի թիվ 1,թիվ 2 դպրոցներ>>, <<Մրգաշատի երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի, <<Հայ փոստի>> և <<Արմենտելի>> աշխատողների համար կազմակերպվել է Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ համերգ, հրավառություն և վերջում բաժանվել են նվերներ:

10.Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում

20) Աշխատում է համայնքի բուժ.ամբուլատորիան, գործու է հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի և ֆուտբոլի խմբակները:

21) Կազմակերպվում և անցկացվում են համայնքային մարզական միջոցառումներ:

11. Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում

22) Աջակցել ենք սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանը: Համայնքի սոցիալապես անապահով 54 ընտանիքների տրվել է դրամական օգնություն:

12. Գյուղատնտեսության բնագավառում

23) Համայնքի գյուղացիական տնտեսությունների համար ձեռք է բերվել պարարտանյութ և դիզ.վառելանյութ:

24) Մաքրվել է համայնքի ոռոգման ցանցի որոշակի տարածքներ:

25) Կազմակերպվել է համայնքի կենդանիների և թռչունների հաշվառում:

13. Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում

26) Պահպանվում են համայնքի կանաչ գոտիներն ու ծառերը:

Մրգաշատի գյուղական համայնքում 2013 թվականին նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները

1. Համայնքի ճանապարհների հարթեցում և խճապատում
2. Ոռոգման ներտնտեսային ցանցի մաքրում
3. Ծիգի հետ համատեղ ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցում
4. Համայնքում կազմակերպվել միջոցառումներ՝
   - Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի կապակցությամբ
   - Նվիրված Մեծ Եղեռնի 98-ամյակին
   - Նվիրված աշխատանքի տոնին՝ մայիսի 1-ին
   - Նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակին և Շուշիի ազատագրմանը
   - Նվիրված երեխաների պաշտպանության օրվան՝ հունիսի 1-ին
   - Նվիրված գյուղի աշխատողին, կազմակերպվում է <<Մաճառի տոն>>:
   - Նվիրված Ամանորի և Սուրբ Ննդյան տոններին:

ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Գ.ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ *Վ.ՊՈՂՈՍՅԱՆ*